

Հայ գրականության օլիմպիադա-2017

Մարզային փուլ

X դասարան - պատասխաններ

1. Հայոց դիցարանը հայ հեթանոս աստվածների ընտանիքն է՝ իր գերագույն աստված Արամազդով և նրա որդիներով ու դուստրերով, որոնցից ամեն մեկը մարմնավորում է որևէ աստվածություն:

Հայոց դիցարանը ստեղծվել է վաղնջական ժամանակներում, երբ մարդը կապված էր բնությանը և այնտեղ էր որոնում իրեն հուզող բոլոր հարցերի պատասխանները՝ հյուսելով առասպելական գրույցներ, ասքեր, վիպերգեր:

Առասպելները գրույցներ են բնության ուժերը մարմնավորող աստվածների մասին.

Այստեղ գործում են բացառապես աստվածներ: Առասպելները կազմում են ժողովրդական բանահյուսության հնագույն շերտը: Քերթողահայր Խորենացու շնորհիվ մոռացությունից փրկվել ու մեզ է հասել մեր միակ առասպելը՝ «Վահագնի ծնունդը» հիմներգը:

Հայոց դիցարանը ավելի հին է հունականից, որի գերագույն աստվածը Չևսն է.

Չևս- ամպրոպի, ուժի, աստվածների հայր--Արամազդ, Արես- պատերազմի, Պոսեյդոն-ծովի, ջրի, Պրոմեթևս-կրակի- Վահագն(քանի որ Վահագնը մարմնավորում է բնության չորս տարրերը՝ օդը, ջուրը, կրակը, հողը, ուստի նրա մեջ ամփոփված են հունական այս աստվածների հատկությունները):

Աֆրոդիտե՝ գեղեցկության-Աստղիկ, Արտեմիս՝ պտղաբերության-Անահիտ, Աիդ՝ ստորգետնյա թագավորության- Սպանդարամետ: Դպրության աստված Տիրը մասամբ է համապատասխանում հունական Հերմեսին, քանի որ Տիրը առանձին աստվածություն է, իսկ Հերմեսը Չևսի սուրհանդակն է:

2. Վահագնը ռազմի, քաջության և ամպրոպի աստվածն է, որը ծնվել է տիեզերքը կազմող չորս հիմնական տարրերից՝ օդից, ջրից, կրակից, հողից:

«Վահագնի երգը» միակ առասպելն է, որ մեզ է հասել բառացիորեն՝ Քերթողահայր Խորենացու շնորհիվ. այն աշխարհի հնագույն հիմներգերից է: Հեթանոս հայի կրոնական պատկերացումը վառ երևակայության շնորհիվ դարձել է անզուգական երգ՝ ռիթմիկ, երաժշտական, որն արդյունք է որոշ բառերի և հնչյունների կրկնության. երկներ- երկին, երկներ-երկիր, ծով- ծիրանի, կարմրիկ-եղեգնիկ, հուր- հեր, աչկունք-արեգակունք. Ներքին հանգերի և հնչյունների այսպիսի կրկնությունը կոչվում է հանգիտություն:

Դեռևս VII դարում Անանիա Շիրակացին Վահագնի անվան հետ է կապում «Հարդագողի ճանապարհ» համաստեղությունը, որ համարժեք է հունական Ծիր Կաթինին: Երկու անվանումներն էլ կապված են նրանց շուրջ հյուսված առասպելների հետ:

Վահագնը ասորի Բարշամից հարդ է գողանում. Երկնքով տանելիս հարդը թափվում է և մատնանշում Վահագնի անցած ճանապարհը, իսկ հունական առասպելաբանության մեջ Ծիր Կաթինը Հերայի կրծքից թափվող կաթի հետագիծն է:

Հայ ժողովուրդը Վահագնին նույնացրել է Տիգրան Մեծի որդիներից մեկի հետ: Նրա մասին պատմող երգերում առկա է նրա և Հերակլեսի սխրանքների նմանությունը;

3. Վիպերգերը ստեղծվել են ավելի ուշ ժամանակաշրջանում և առավելապես պատկերում են ժողովրդի կյանքում տեղի ունեցած պատմական դեպքերը և պատմական դեմքերին, իհարկե, համեմված առասպելական տարրերով, իսկ առասպելները պատկերում են բնության ուժերը մարմնավորող աստվածներին և կազմում են ժողովրդական բանահյուսության հնագույն շերտը:
«Արտաշես և Սաթենիկ» դրվագը «Արտաշես և Արտավազդ» վիպերգի երկրորդ մասն է: Այս վիպերգը ստեղծվել է Ք.ա. II-ի դարերում: Թեմատիկան հայրենասիրությունն է, հերոսականությունը՝ միահյուսված սիրո և ասպետության գեղեցիկ գաղափարին:

**Յեժաւ արի արքայն Արտաշես ի սեան գեղեցիկ,
Եւ հանեալ զոսկէօղ շիկափոկ պարանն,
Եվ անցեալ որպէս զարծուի սրաթև ընդ գետն,
Եւ ձգեալ զոսկէօղ շիկափոկ պարանն՝
Ընկեց ի մէջք օրիորդին ալանաց.
Եը շատ ցաւեցոյց զմէջք փափուկ օրիորդին,
Արագ հասուցանելով ի բանակն իւր:**

Այս դրվագում հրաշալի են ներկայացված ժողովրդական սովորությունները, ծեսերը, հարսանիքի տեսարանը, ժողովրդի բարեկեցությունը, սերը բարեպաշտ ու շինարար արքայի նկատմամբ:

4. Հայ հանճարներից միայն Գրիգոր Նարեկացին է դասվել տիեզերական սրբերի շարքը՝ ստանալով Տիեզերական վարդապետ տիտղոսը: 2015 թվականի ապրիլին Հռոմի պապ Ֆրանցիսկոսը Վատիկանում կատարեց Նարեկացուն տիեզարական սրբերի շարքը դասելու արարողակարգը:
Նարեկացին հայոց Վերածննդի հիմնադիրն է. Նա առաջինը երգեց կենդանի բնությունը, կնոջ գեղեցկությունը, մարդու մաքրագործումը:
«Մատյան ողբերգության»(Նարեկ) պոեմում Նարեկացին խտացնում է իր մեջ ողջ մեղսագործ մարդկությանը՝ ողբալով ու աղոթելով մարդու մաքրագործման, կատարելության, Աստծու մեջ բնակվելու և մարդուն իր մեջ բնակեցնելու անխախտ հավատով:
Բանաստեղծի «մեղքը» մեղքերով լեցուն մարդու բացահայտումն է՝ թագավորից մինչև վերջին մուրացկանը, մարդու մաքրագործման տառապալից ուղու անվերջ շարունակությունը:
Իսկ Նարեկացին աշխարհի մեծագույն Ամմեդն է, աստվածային օրհնությամբ սրբացած հանճարը. Այդ են վկայում նրա անվան շուրջ հյուսված բազում ավանդույթները, որոնք պատմվել են անգամ նրա կենդանության օրոք: